# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 28.04.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/37-2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

07.06.2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Բոնանզա>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Դ.Պալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 28.04.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/37-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 28.04.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն»
ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
<<Բոնանզա>> ՍՊԸ
ք. Երևան, Աղայան 11ա, բն. 1
ՀՎՀՀ 00885311
հ/հ 11815022831000
<<ԱյԴԻ Բանկ>> ՓԲԸ
direct@bonanza.am
099-013-913
Դ.Պալյան

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.